

Երուսաղեմի Հ.Յ.Դ.Ն Կը Նշէ Կուսակցութեան Հիմնադրման 115ամեակը

27 Յունուար 2006
Երուսաղեմ

Հ.Յ.Դաշնակցութեան հիմնադրման 115րդ տարեդարձի նշումը որոշ յայտարարումով տեղի ունեցաւ Ուրբաթ, 27 Յունուար 2006ին Հ.Ս.Ը.Ս.ի սրահի մէջ նախագահութեամբ Ս. Աթոռոյ Արտաքին Յարաբերական Գրասենեակի Պատասխանատու Գերշ. Արիս Եպս. Շիրվանեանի:

Աւելի քան 80 հանդիսականերու առաջ, Գարեգին Նժդեհի նուիրեալ երկու երգերով հանդէս եկան միութեան սիրուած երգիչ երիտասարդ Հրայր Եզեկեւեանը, ընկերակցութեամբ պատանի կիթարիսդ Աբօ Սահակեանի:



Հրայրը եւ Աբօն



Տուտուկահար Աշօտը

Առաւել երկու առթիւ, հանդէս եկաւ հայրենիքէն հիւրաբար շրջանս գտնուող մասնագէտ տուտուկահար Աշօտ Սահակեանը, ներկայացնելով "Պարզիր Աղբիւր"ը թէ "Հայրենի Յուշեր"ը:

Օրուան որպէս պատգամաբեր, հանդէս եկաւ Հ.Յ.Դ.ի Հայաստանեան մամուլի երեց յօդուածագիր ընկ. Լեւոն Շիրինեան, որը իր խօսքի մէջ յատկապէս անդրադարձաւ Դաշնակցութեան այսօրուայ մարտահրաւերներուն, որոնք մինչեւ օրս Դաշնակցութեան ձեռք բերած զինեալ պայքարի թէ զինուորական նուաճումներէն շատ աւելի բարդն են նկատի առնելով այսօրուան Հայաստանի ընկերային թէ տնտեսական տագնապները:



Ընկ. Յ. Սեւան



Ընկ. Լ. Շիրինեան

Այսուհետև, բանախօսը յոյս ներշնչեց որ մեր ժողովուրդն, որը միայն երէկ նուաճեց Արցախի անկախութիւնը եւ ապրեցաւ 90ականի դաժան տարիները, ան անպայման կը յաղթահարի այս վիճակին եթէ գերադասի հայրենի շահը թէ հաւաքականի շահը անհատի "ես"ի հաշիւներէն:

Ապա, խօսք առաւ շրջանիս Հ.Յ.Դ Կոմիտէութեան անդամ ընկ. Յակոբ Սեւան ու ընդհանրապէս անդրադարձաւ գաղութիս ազգային թէ ընկերային արժէքներուն նահանջին ու դժուարութեանց եւ վերջապէս Դաշնակցութեան վերցնելիք դեռին ու յանձնառելի պատասխանատւութեանց:



Եղբ. Յ. Պաղամեան



Գերշ. Արիս Եպս. Շիրվանեան

Յայտագրի աւարտին, եղբ. Յարութ Պաղամեան, Է. Ակնունիի «Դէպի Երկիր» մենախօսութեան ընթերցումով ներդաշնակօրէն շաղկապեց Հ.Յ.Դ.ի հեռաւոր անցեալն թէ ներկան հին թէ նոր «Դէպի Երկիր» կարգախօսով:

Օրուան փակման խօսքը կատարեց Գերշ. Արիս Եպս. Շիրվանեան, որը իր կարճ ու ազդու խոսքով բերաւ իր գնահատականը Հ.Յ.Դ.ին:

Յայտագրի պաշտօնական բաժնի աւարտէ ետք հանդիսականները դիմեցին ընդունելութեան սրահ ուր միացեալ բաժակ վերցուցին եւ հայրենիքի յաւետինականութեան եւ Դաշնակցութեան ապագայ ծառայութեան երթին:

